ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ–ի դասվարի (10 դասաժամ), պատմության (21 դասաժամ՝ 6 դասաժամ <<Իմ հայրենիքը>>, 4 դասաժամ՝ <<Իմ հայրենիքն ու աշխարհը>>, 6 դասաժամ՝ <<Հայոց պատմություն>>, 4 դասաժամ՝ <<Համաշխարհային պատմություն>>, 1 դասաժամ <<Հասարակագիտություն>>) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողություններ-ի ստուգումն անց կացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

2)բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ, միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն՝ առկայության դեպքում,

5)ինքնակենսագրություն (Ձև 4),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9)որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ.

10)Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

11) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի նոյեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025թ-ի դեկտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին,Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք. Բյուրեղավան, Ս.Վարդանյան 2:

Տեղեկությունների համար զանգահարել (0222) 6-54-40 հեռախոսահամարով: